

Վարչության նախագահի ժ/պ՝

Վ. Բաղդասարյան



ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուժի մեջ է՝ 01.10.2018թ.-ից:

Ներկայացված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասներին
կարող եք ծանոթանալ Բանկի [մասնաճյուղերում](http://www.artsakhbank.com) և պաշտոնական կայքում՝
www.artsakhbank.com, artsakhbank.am, www.ab.am հասցեներով՝ «Ավանդներ» բաժնում:
Հեռ.՝ +374 60 747779, +374 47 943334

1. ԱՎԱՆԴ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ

1.1. Ավանդի հիմնական պայմանները

Ժամկետ	Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Տարեկան տոկոսադրույք, %					
		AMD, մինչև 50 000 000		USD, մինչև 100 000		EUR, մինչև 100 000	
		Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
31-ից 90 օր	Ամսական	5.00	5.04	2.00	1.99	0.25	0.25
91-ից 180 օր	Ամսական	6.00	6.13	2.75	2.77	0.50	0.50
181-ից 270 օր	Ամսական	7.50	7.73	3.25	3.29	1.00	1.00
	Ժամկետի վերջում	8.00	8.05	4.00	4.01	1.25	1.25
271-ից 365 օր	Ամսական	9.25	9.62	4.50	4.58	1.30	1.30
	Ժամկետի վերջում	9.75	9.72	4.75	4.74	1.35	1.35
366-ից 550 օր	Ամսական	10.00	10.45	5.00	5.11	1.40	1.41
	Ժամկետի վերջում	10.25	9.98	5.25	5.17	1.50	1.49
551-ից 730 օր	Ամսական	10.00	10.45	5.00	5.11	1.75	1.76
	Ժամկետի վերջում	10.25	9.76	5.25	5.11	2.00	1.98

1.2. Ավանդի նվազագույն գումար՝

- ՀՀ դրամով՝ 50 000 /Հիսուն հազար/
- ԱՄՆ դոլարով՝ 150 /Մեկ հարյուր հիսուն/
- Եվրոյով՝ 150 /Մեկ հարյուր հիսուն/

1.3. Լրացուցիչ պայմաններ

➤ Ժամկետային ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի ավելացումներ և նվազեցումներ չեն թույլատրվում:

➤ Ավանդների վաղաժամկետ լուծման դեպքում տոկոսագումարները վերահաշվարկվում են ցպահանջ* ավանդի տոկոսադրույքով:

➤ Եթե ավանդը ներդնելու պահին Ավանդատուի Բանկում գործող ժամկետային ավանդների հանրագումարը (ներառյալ ներդրվող ավանդը) գերազանցում է սահմանված առավելագույն գումարը՝ ներդրվող ավանդի պայմանները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:

2. ԱՎԱՆԴ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ

2.1. Ավանդի հիմնական պայմանները

Ժամկետ	Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Տարեկան տոկոսադրույք, %			
		AMD, մինչև 100 000 000		USD, մինչև 200 000	
		Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
730 օր	Ամսական	9.50	9.91	4.50	4.59
Հատուկ պայման՝ Ավանդատուի պահանջով ավանդի գումարը ժամկետից շուտ՝ 366-րդ օրից ստանալու դեպքում տոկոսագումարները վերահաշվարկվում են հետևյալ տոկոսադրույքով		8.50		4.25	

2.2. Ավանդի նվազագույն գումարը՝

- ՀՀ դրամով՝ 50 000 /Հիսուն հազար/
- ԱՄՆ դոլարով՝ 150 /Մեկ հարյուր հիսուն/

2.3. Լրացուցիչ պայմաններ

- Կուրսակալին ավանդների համալրումը թույլատրվում է մինչև մարմանը նախորդող 30-րդ օրը: Կուրսակալին ավանդի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուրաքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ ավանդի հաշվի մասին անհրաժեշտ փայլանքների նշումով:
- Ավանդների՝ մինչև 365 օրը (ներառյալ) լուծման դեպքում փոկոսագումարները վերահաշվարկվում են ցպահանջ* ավանդի փոկոսադրույքով:

3. ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՆԴ

3.1. Ավանդի հիմնական պայմանները

Ավանդի արժույթը	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
Նվազագույն գումար	500 000		1 000	
Առավելագույն գումար	50 000 000		100 000	
Ժամկետ	730 օր			
Տարեկան տոկոսադրույք, %	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
	9.75	10.18	4.50	4.59
Տոկոսագումարի վճարման պարբերականություն	Ամսական			
Գումարի ավելացում	Չի թույլատրվում			
Գումարի նվազեցում	Չի թույլատրվում			

3.2. Հատուկ պայմաններ

Ավանդատուի պահանջով ավանդի գումարի ժամկետից շուտ ստանալու դեպքում վճարվող տոկոսադրույք	Արժույթը	Օրերի քանակ, տարեկան տոկոսադրույք, %				
		Մինչև 180 օր	181-270 օր	271-365 օր	366-550 օր	551 օր և ավելի
	ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդի* տոկոսադրույք	6.00	7.75	8.00	8.75
ԱՄՆ դոլար		2.00	3.00	3.50	4.50	

4. ԳՈՒՄԱՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՆԴ

4.1. Ավանդի հիմնական պայմանները

Ավանդի արժույթը	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար	
Նվազագույն գումար	500 000		1 000	
Առավելագույն գումար	50 000 000		100 000	
Ժամկետ	550 օր			
Տարեկան տոկոսադրույք, %	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
	8.75	8.55	4.25	4.20
Տոկոսագումարի վճարման կարգը	Ժամկետի վերջում			
Գումարի ավելացում	Չի թույլատրվում			
Գումարի նվազեցում	<ul style="list-style-type: none"> • Հաճախորդն իրավունք ունի պահպանելով ավանդի գումարի նվազագույն շեմը նվազեցնել ավանդի գումարի առավելագույնը 30.00 %-ի չափով, բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 275 օրերի: • Գումարի նվազեցման դեպքում տոկոսագումարների վերահաշվարկ չի 			

կատարվում:	<ul style="list-style-type: none"> Ավանդային պայմանագրի լուծման դեպքում տոկոսագումարները վերահաշվարկվում են ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:
------------	---

*Ցպահանջ ավանդի տոկոսադրույքը.

Ցպահանջ ավանդի տարեկան տոկոսադրույքը, %								
Տոկոսագումարի վճարման ձև	AMD		USD		EUR		Այլ արժույթով	
	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
եռամսյակային	1.00	1.00	0.50	0.50	0.10	0.10	0.00	0.00

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՅՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ WWW.ARTSAKHBANK.COM, WWW.ARTSAKHBANK.AM ԿԱՄ WWW.AB.AM ՀԱՍՑԵՆԵՐՈՎ՝ «ԱՎԱՆԴՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Ավանդը կարող է ներդրվել Բանկ որոշակի երրորդ անձի անունով:

5.2. Ոչ ռեզիդենտ հաճախորդների կողմից ներդրվող ավանդների պայմանները կարող են սահմանվել յուրաքանչյուր հաճախորդի հետ առանձին բանակցման միջոցով, որոնք կարող են տարբերվել Բանկի կողմից հրապարակված ավանդների ներգրավման վերոնշյալ ընդհանուր պայմաններից:

5.3. Ավանդի գումարին տոկոսների հավելագրման և վճարման կարգը

➤ Ավանդի գումարի դիմաց տոկոսները հավելագրվում են ավանդի Բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի ավանդային հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակն ընդունվում է 365, իսկ նահանջ տարին՝ 366 օր:

➤ Ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը Հաճախորդը ներդնել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, պայմանագրի գործողության ժամկետում մնում է անփոփոխ:

➤ Երբ ժամկետային ավանդը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, Ավանդատուի տոկոսները վճարվում են Բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, իսկ ավանդի գումարից գանձվում է արդեն իսկ վճարված տոկոսագումարների և վճարման օրվա դրությամբ Բանկում գործող ցպահանջ ավանդի սահմանված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարի տարբերությունը:

➤ Ավանդատուին տոկոսագումարները վճարվում են Ավանդի արժույթով, բացառությամբ եթե Ավանդատուն տոկոսագումարի վճարման օրը ցանկություն է հայտնել արտարժույթային Ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարները ստանալ << դրամով: Ընդ որում, արտարժույթային Ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարները << դրամով վճարելու դեպքում փոխարկումն իրականացվում է տվյալ արտարժույթի համար վճարման պահին Բանկի կողմից սահմանված առքի փոխարժեքով:

➤ Ավանդների գծով հաշվարկված տոկոսագումարների վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով: Ավանդի գումարի վրա հավելագրված տոկոսները փոխանցվում են Բանկում սպասարկվող Ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին:

➤ Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև որպես ավանդ կանխիկ մուտքագրված միջոցները Ավանդատուին կանխիկ վճարելիս միջնորդավճար չի գանձվում:

➤ Որպես ավանդ անկանխիկ մուտքագրված միջոցների կանխիկացման դեպքում գանձվում է միջնորդավճար՝ Բանկում տվյալ պահին գործող սակագների համաձայն, որոնց կարող եք ծանոթալ Բանկի

պաշտոնական կայքում՝ www.artsakhbank.com, www.artsakhbank.am կամ www.ab.am հասցեներով՝ «Սակագներ» բաժնում:

➤ Ավանդի գործողության ժամանակահատվածում Բանկում Հաճախորդի բանկային հաշիվները պահպանվում են անվճար՝ անկախ հաշվով գործարք չկատարելու վաղեմությունից:

➤ Բանկային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ եթե Հաճախորդը չի կնքում նոր ավանդային պայմանագիր և գումարները մնում են հաշվին, տվյալ հաշվի սպասարկումն իրականացվում է մնացյալ նմանատիպ հաշիվների սկզբունքով՝ կիրառելով բոլոր համապատասխան սակագները և պայմանները:

5.4. Ավանդի գումարի վերադարձը

➤ Բանկային ավանդի պայմանագրով Բանկն ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնում է Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջի դեպքում, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

➤ Երբ Ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, ապա պայմանագիրը համարվում է դադարեցված: Ավանդի վերադարձման օրը Բանկն ավանդը փոխանցում է Ավանդատուի բանկային հաշվին:

➤ Եթե ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

➤ Ավանդը, դրա մի մասը և/կամ դրա վրա հավելագրված տոկոսները ստանալիս՝ Ավանդատուն Բանկ է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ և Բանկային ավանդի պայմանագրի իր օրինակը:

➤ Համաձայն ՀՀ/ԱՀ գործող օրենսդրության՝ ներգրավված ավանդներից ստացված եկամուտները ենթակա են հարկման եկամտային հարկով՝ ՀՀ-ում ավանդի դիմաց հավելագրված տոկոսագումարի 10.00 %-ի չափով, ԱՀ-ում՝ ռեզիդենտ անձանցից՝ 5.00 %-ի չափով, ոչ ռեզիդենտ անձանցից՝ 10.00 %-ի չափով:

5.5. Ավանդի գումարի հատուցման երաշխավորման կարգը



Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորվում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Երաշխավորված ավանդի չափերը սահմանվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերն են՝

- միայն դրամային ավանդի դեպքում՝ մինչև 10 (Տասը) միլիոն ՀՀ դրամ,
- միայն արտարժությային ավանդի դեպքում՝ մինչև 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամից ավել), և՛ արտարժությային ավանդների դեպքում՝ միայն դրամային ավանդը՝ մինչև 10 (Տասը) միլիոն ՀՀ դրամ,

- և՛ դրամային (մինչև 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամ), և՛ արտարժությային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժությային ավանդը՝ 5 (Հինգ) միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և բոլոր արտարժությային ավանդները՝ մեկ ավանդ:

Այն դեպքում, երբ Բանկի նկատմամբ Ավանդատուի բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ավանդատուի ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Բանկում ավանդները չեն երաշխավորվում, եթե՝

- Ավանդատուն հանդիսանում է Բանկի ղեկավար և / կամ վերջինիս ընտանիքի անդամ,
- Ավանդատուն հանդիսանում է Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և / կամ վերջինիս ընտանիքի անդամ,

- Ավանդատուն, որպես ավանդի սեփականատեր (համասեփականտեր) հրաժարվել է ավանդի իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

- ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ ավանդատուն հակառակը չի ապացուցել,

- ավանդը Բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդնման պահին Բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքը առնվազն 1.5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- ավանդը ներդրված է Բանկի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում, ինչպես նաև ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում:

5.6. Քաղվածքների և այլ տեղեկությունների տրամադրումը

Բանկն ավանդային պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա պարբերականությամբ Ավանդատուին անվճար տրամադրում է Ավանդային հաշվի քաղվածք՝ օրենքով սահմանված ձևով: Այլ դեպքերում քաղվածքները, դրանց կրկնօրինակները և այլ տեղեկությունները տրամադրվում են Բանկում գործող հետևյալ սակագներով.

- Ավանդային հաշվի մեկ ամսից ավելի վաղեմության քաղվածքի տրամադրում՝ 1 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Ավանդային հաշվի վերաբերյալ վճարային փաստաթղթերի պատճենների տրամադրում՝ յուրաքանչյուր փաստաթղթի համար.
 - Յուրաքանչյուր գործարքից հետո՝ 0 ՀՀ դրամ.
 - Մինչև 30 օր վաղեմություն ունեցող՝ 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
 - 31 օրից մինչև 1 տարի վաղեմություն ունեցող՝ 2 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
 - Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող՝ 3 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Ավանդային հաշվի վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկանքի, Հաճախորդի կողմից կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում՝ 2 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):
- Փաստաթղթերի և քաղվածքների առաքում (կիրառվում է ի հավելումն տրամադրման սակագնին)՝
 - ֆաքսային (մեկ էջի համար)՝ 1 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
 - էլ. փոստով՝ 0 ՀՀ դրամ
 - փոստային եղանակով՝ ՀՀ/ԱՀ տարածքում՝ 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ).
 - պատվիրված առաքման ծառայության միջոցով/DHL և այլն/-ով՝ 35 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Հաճախորդները իրենց նախաձեռնությամբ կարող են հեռախոսային կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով տեղեկություններ ստանալ Ավանդային հաշվով գործարքների վերաբերյալ: Կարճ հաղորդագրության տրամադրման սակագինը հետևյալն է՝ 1 sms արժեքը 30 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

5.7. Վեճերի լուծման կարգը

➢ Ավանդային պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատական եղանակով, Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի միջոցով՝ արբիտրաժային համաձայնություն կնքված լինելու դեպքում:

➢ 10 000 000 Ֆասը միլիոն) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:

➢ Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250 000 (Երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի ընդհանուր չափը չի գերազանցում 500 000 (Հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

6. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

6.1. Ժամկետային ավանդ՝ Բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է ԱՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 100,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդնման օր՝ 01.08.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 365 օր (մինչև 01.08.19թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.25%
- Տոկոսների վճարումը՝ ամսական

- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամուտ. 100,000 (ներդրված գումար) x 9.25 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 25.34:
ընդհանուր փոկոսային եկամուտ. 25.34 x 364 (օր) (չեն հաշվարկվում ավանդի ներդնման /01.08.2018թ./ և վճարման /01.08.19թ./ օրերը) = 9,223.76:
զուտ փոկոսային եկամուտ. 9223.76 – 922.38 (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 8301.38 (ավանդատուին վճարման ենթակա գումար):

Արդյունքում, ներդրված 100,000 ՀՀ դրամը 365 օր հետո կկազմի 108,301.38 ՀՀ դրամ:

6.2. Ժամկետային ավանդ՝ Բանկի՝ ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 100,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդնման օր՝ 01.08.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 365 օր (մինչև 01.08.2019թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.25%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամուտ. 100,000 (ներդրված գումար) x 9.25 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 25.34:
ընդհանուր փոկոսային եկամուտ. 25.34 x 364 (օր) (չեն հաշվարկվում ավանդի ներդնման /01.08.2018թ./ և վճարման /01.08.19թ./ օրերը) = 9,223.76:
զուտ փոկոսային եկամուտ. 9,223.76– 461.19 (ընդհանուր տոկոսային եկամտի 5%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 8,762.57 (ավանդատուին վճարման ենթակա գումար):

Արդյունքում, ներդրված 100,000 ՀՀ դրամը 365 օր հետո կկազմի 108,762.57 ՀՀ դրամ:

6.3. Կուտակային ավանդ՝ Բանկի ՀՀ-ում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է ԱՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդնման օր՝ 01.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 730 օր (մինչև 30.11.2020թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.50%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Գումարի ավելացում՝ 23.01.2019թ.-ին գումարի ավելացում 50,000 ՀՀ դրամ, 20.03.2019թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամուտ. 1,000,000 (ներդրված գումար) x 9.50 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 260.27:
Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (23.01.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 260.27 x 53 (օր) (չի հաշվարկվում ավանդի ներդնման /01.12.2018թ. օրը/) = 13,794.31:
Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի 1,000,000 + 50,000 = 1,050,000 ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,050,000 x 9.50/100/365 = 273.29 ՀՀ դրամ: Մինչև գումարի հաջորդ ավելացումը (20.03.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 273.29x56 (օր) = 15,304.24 ՀՀ դրամ:

<p>Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ $1,050,000 + 150,000 = 1,200,000$ ՀՀ դրամ:</p> <p>Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,200,000 \times 9.50/100/365 = 312.33$ ՀՀ դրամ:</p> <p>Մինչև ավանդի ժամկետի ավարտը (30.11.2020թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 312.33×620 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման 30.11.2020թ. օրը) = $193,644.60$ ՀՀ դրամ:</p>
<p>ընդհանուր տոկոսային եկամուտ. $13,794.31 + 15,304.24 + 193,644.60 = 222,743.15$ ՀՀ դրամ:</p>
<p>զուտ տոկոսային եկամուտ. $222,743.15 - 22,274.32$ (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = $200,468.8$ (ավանդատուին վճարման ենթակա գումար):</p>

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,400,468.8 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը:

6.4. Կուտակային ավանդ՝ Բանկի՝ ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Ավանդի ներդնման օր՝ 01.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 730 օր (մինչև 30.11.2020թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 9.50%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Գումարի ավելացում՝ 23.01.2019թ.-ին գումարի ավելացում 50,000 ՀՀ դրամ, 20.03.2019թ.-ին՝ 150,000 ՀՀ դրամ
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

<p>Մեկ օրվա տոկոսային եկամուտ. $1,000,000$ (ներդրված գումար) $\times 9.50$ (տարեկան տոկոսադրույք) $/100/365$ (տարվա օրերի քանակ) = 260.27:</p>
<p>Մինչև ավանդի գումարի ավելացման օրը (23.01.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 260.27×53 (օր) (չի հաշվարկվում ավանդի ներդնման /01.12.2018թ. օրը/) = $13,794.31$:</p>
<p>Գումարն ավելացնելուց հետո ներդրված գումարը կկազմի $1,000,000 + 50,000 = 1,050,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,050,000 \times 9.50/100/365 = 273.29$ ՀՀ դրամ: Մինչև գումարի հաջորդ ավելացումը (20.03.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 273.29×56 (օր) = $15,304.24$ ՀՀ դրամ:</p>
<p>Հերթական գումարի ավելացում կատարելուց հետո ներդրված գումարը կկազմի՝ $1,050,000 + 150,000 = 1,200,000$ ՀՀ դրամ: Գումարի ավելացումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ $1,200,000 \times 9.50/100/365 = 312.33$ ՀՀ դրամ: Մինչև ավանդի ժամկետի ավարտը (30.11.2020թ.) տոկոսային եկամուտը կկազմի՝ 312.33×620 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման 30.11.2020թ. օրը) = $193,644.60$ ՀՀ դրամ:</p>
<p>ընդհանուր տոկոսային եկամուտ. $13,794.31 + 15,304.24 + 193,644.60 = 222,743.15$ ՀՀ դրամ:</p>
<p>զուտ տոկոսային եկամուտ. $222,743.15 - 11,137.16$ (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = $211,606$ (ավանդատուին վճարման ենթակա գումար):</p>

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 1,411,606 ՀՀ դրամ, որից ընդհանուր առմամբ ներդրվել է 1,200,000 ՀՀ դրամը:

6.5. Ընդհատման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է ԱՀ տարածքում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ավանդ ներդնելու դեպքում)

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդնման օր՝ 02.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 730 օր (մինչև 01.12.2020թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 4.50%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Ավանդի ընդհատում՝ առ 01.12.2019թ.
- Ավանդի գումարը 364-րդ օրը ստանալու դեպքում՝ տարեկան տոկոսադրույք՝ 3.0%
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա տոկոսային եկամուտ. 1,000 (ներդրված գումար) x 3.00 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար:
ընդհանուր տոկոսային եկամուտ. 0.08 x 363 (օր) (չեն հաշվարկվում ավանդի ներդնման /02.12.2018թ./ և վճարման /01.12.2019թ./ օրերը) = 29.04:
զուտ տոկոսային եկամուտ. 29.04 – 2.90 (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 26.14 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում 12,547.2 ՀՀ դրամ:

Արդյունքում, ներդրված 1,000 ԱՄՆ դոլար ավանդը 364 օր հետո ընդհատելու դեպքում ընդհանուր գումարը կկազմի 1,026.14 ԱՄՆ դոլար:

6.6. Ընդհատման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ռեզիդենտի կողմից ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 1,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդնման օր՝ 02.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 730 օր (մինչև 01.12.2020թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 4.50%
- Տոկոսների վճարումը՝ ամսական
- Ավանդի ընդհատում՝ առ 01.12.2019թ.
- Ավանդի գումարի 364-րդ օրը ստանալու դեպքում տարեկան տոկոսադրույք՝ 3.0%
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա տոկոսային եկամուտ. 1,000 (ներդրված գումար) x 3.00 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 0.08 ԱՄՆ դոլար:
ընդհանուր տոկոսային եկամուտ. 0.08 x 363 (օր) (չեն հաշվարկվում ավանդի ներդնման /02.12.2018թ./ և վճարման /01.12.2019թ./ օրերը) = 29.04:
զուտ տոկոսային եկամուտ. 29.04 – 1.45 (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 27.59 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում 13,243.2 ՀՀ դրամ:

Արդյունքում, ներդրված 1,000 ԱՄՆ դոլար ավանդն 364 օր հետո ընդհատելու դեպքում ընդհանուր գումարը կկազմի 1,027.59 ԱՄՆ դոլար:

6.7. Գումարի նվազեցման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում (հաշվարկը նույնն է նաև ԱՀ տարածքում գործող Բանկի մասնաճյուղերում ոչ ռեզիդենտի կողմից նմանատիպ պայմաններով ներդրվող ավանդների համար)

- Ավանդի սկզբնական գումար՝ 2,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդնման օր՝ 01.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 550 օր (մինչև 03.06.2020թ.)

- Տարեկան տոկոսադրույք՝ 4.25%
- Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում
- Գումարի նվազեցում 600 ԱՄՆ դոլարով առ 30.11.2019թ.-ին
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 10.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամուտ. 2,000 (ներդրված գումար) x 4.25 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 0.23 ԱՄՆ դոլար: Մինչև ավանդի գումարի նվազեցման օրը (30.11.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 0.23 x 364 ժր) (չի հաշվարկվում ավանդի ներդնման /01.12.2018թ./ օրը)/= 83.72 ԱՄՆ դոլար:
Գումարը նվազեցնելուց հետո ներդրված գումարը կկազմի 2,000 - 600 = 1,400 ԱՄՆ դոլար: Գումարի նվազեցումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,400 x 4.25 / 100 / 365 = 0.16 ԱՄՆ դոլար:
Մինչև ավանդի ժամկետի ավարտը (03.06.2020թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 0.16 x 185 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /03.06.2020թ./ օրը) = 29.60 ԱՄՆ դոլար:
ընդհանուր փոկոսային եկամուտ. 83.72 + 29.60 = 113.32 ԱՄՆ դոլար:
զուտ փոկոսային եկամուտ. 113.32 - 10.59 (ընդհանուր տոկոսային եկամտի 10.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 101.99 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում 48 955 ՀՀ դրամ:

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր ներդրված 2 000 ԱՄՆ դոլար ավանդը 365 օր անց 30%-ով նվազեցնելուց հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 2,000-600+101.99=1,501.99 ԱՄՆ դոլար:

6.8. Գումարի նվազեցման հնարավորությամբ ավանդ՝ Բանկի ԱՀ տարածքում գործող մասնաճյուղերում ներդնելու դեպքում

- Ավանդի սկզբնական գումար՝ 2,000 ԱՄՆ դոլար
- Ավանդի ներդնման օր՝ 01.12.2018թ.
- Ավանդի ներդնման ժամկետ՝ 550 օր (մինչև 03.06.2020թ.)
- Տարեկան տոկոսադրույք՝ 4.25%
- Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում
- Գումարի նվազեցում 600 ԱՄՆ դոլարով առ 30.11.2019թ.-ին
- Եկամտային հարկ՝ ավանդին հավելագրվող տոկոսագումարի 5.00%

Ավանդի տոկոսագումարի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Մեկ օրվա փոկոսային եկամուտ. 2,000 (ներդրված գումար) x 4.25 (տարեկան տոկոսադրույք)/100/365 (տարվա օրերի քանակ) = 0.23 ԱՄՆ դոլար: Մինչև ավանդի գումարի նվազեցման օրը (30.11.2019թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի 0.23 x 364 ժր) (չի հաշվարկվում ավանդի ներդնման /01.12.2018թ./ օրը)/= 83.72 ԱՄՆ դոլար:
Գումարը նվազեցնելուց հետո ներդրված գումարը կկազմի 2,000 - 600 = 1,400 ԱՄՆ դոլար: Գումարի նվազեցումից հետո մեկ օրվա տոկոսային եկամուտը կկազմի՝ 1,400 x 4.25/100/365 = 0.16 ԱՄՆ դոլար:
Մինչև ավանդի ժամկետի ավարտը (03.06.2020թ.)՝ տոկոսային եկամուտը կկազմի՝ 0.16 x 185 (օր) (չի հաշվարկվում ավանդի վճարման /03.06.2020թ./ օրը) = 29.60 ԱՄՆ դոլար:
ընդհանուր փոկոսային եկամուտ. 83.72 +29.60 = 113.32 ԱՄՆ դոլար:
զուտ փոկոսային եկամուտ. 113.32 - 5.67 (ընդհանուր տոկոսային եկամտի 5.00%-ը՝ եկամտային հարկով հարկման ենթակա գումար) = 107.65 ԱՄՆ դոլար (ավանդատուին վճարման ենթակա գումար) կամ 1 ԱՄՆ դոլար = 480 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում 51,672ՀՀ դրամ:

Արդյունքում, ավանդի ժամկետի ավարտից հետո ընդհանուր ներդրված 2 000 ԱՄՆ դոլար ավանդը 365 օր անց 30%-ով նվազեցնելուց հետո ընդհանուր վերադարձվելիք գումարը կկազմի 2,000-600+107.65=1,507.65 ԱՄՆ դոլար: